Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

18933
18934
18935

Վ. Փափազյան

1. Թոխալ։ – Տփղիս 1890

2. Ե. Տիգրանեան

Գողթան Աշխարհի – Թիֆլիս 1905

3. Վ. Փափազյան

Սասունցի Օհան

Տուկվա – 1892

ամփ.3
391.99
Փ-31

№ 1

Վ. ՓԱՓԱԶԵԱՆՑ.

891.99
Փ-31
Վ.

ՓՈՓՍԼ.

ՏՓԽԻՍ
1890

891.99
Կ-31
Կր

Վ. ՓԱՓԱԶՅԱՆՑ

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ

ԹՈՓԱԼ

(ԹՈՒՐՔԱՀԱՅԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ)

2003

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ" Տ. ՆԱԶԱՐԵԱՆՑԻ
Գոյջին. պր. Ի Բաթիանաշվ. փող. տան:

4387

Дозволено цензурою Тифлисъ, 1890 г. 7-го октября.
Тип. „Арорь“. Т. Я. Назарьяна, уг. Гол. пр. и Барят. ул.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ Արդ. ՍՍՀ
Անվ. Մեսրոպ Մաշտոցի անվան
5709-48

2003

ԹՈՓԱԼ

(ԹԻՒՐՔԱՀԱՅԵՐԻ ԿԵՆԱՆՔԻՑ)

Ա.

Վեց տարի կըլինի, որ Վանը զրկուել է վկայական ունեցող փաստաբաններից. առաջ էլ այդ քաղաքում միայն մի փաստաբան կար, բայց որովհետև ինքը մենակ էր, որ օրէնքով էր խօսում, ուստի և Վանի մեծամեծ էֆէնդիները նրան ուղարկեցին ընդ միշտ Կ. Պոլիս գործադրել տալու այդ օրէնքները։ Վան և օրէնք, երկու մարմիններ են, որոնք ըստ տաճկական քիմիականութեան, իրար հետ երբէք չեն կարող հաշտ ապրել։

Վեց տարի է ուրեմն, որ Վանը այլ ևս մի վկայական ունեցող փաստաբան չունի, դրա փոխարէն ունի մի դաս անվկայական կաղ, կոյր, և երբեմն իսկ թոթովախօս իրաւաբաններ,

որոնց կարելի է ամեն տեղ հանդիպել-պատերի տակ, խանութներում, այգիների մէջ, գինետներում և սրճարաններում:

Դրանցից, ի հարկէ ոչ մէկն էլ Կ. Պոլսի իրաւաբանական դպրոցի երեսը չի տեսել, շատ անգամ իսկ տաճկերէն լաւ խօսել և կարդալ չըգիտէ: Ոմանք իրաւաբանական բառերի բառարան են, մի քանիսները փաստաբանութիւն են անում, որովհետև լաւ ծանօթ են էազանների,[1] կադիների[2] և միւֆէտիշների[3] հետ, ուրիշները իրենք տարիներով դատի տակ ընկած լինելով, սովորել են գործնականապէս և վերջապէս միւսները ստանում են օրինաց նոր դուրս եկած կտորները, կարդումեն և որովհետև պարապ են, այնքան քարշ են գալիս դատարաններում, այնքան լսում են դատեր, որ մի քանի տարիից յետոյ իրաւունք են համարում փաստաբանութեան ձեռնարկելու:

Թօփալը[4] այդ բոլոր յատկութիւններն էլ ունէր. նախ, նրան ծանօթ էին բոլոր էազանները, կադիները և միւֆտիները. նրանց հետ նա ծանօթացել էր զանազան միջոցներով. հեռուից դիտել նրանց, ուսումնասիրել էր այդ պաշտօնեաների թոյլ կողմերը (թոյլ դամարը), յետոյ սկսել էր ոմանց առջև ստրկի հնազանդութիւն և խոնարհութիւն ցոյց տալ, մի քանիսին ձրի ծառայութիւններ և փքուած սծականներ էր շռայլել երեսներին և կամ այնպիսիների մօտ, որոնք իւր խօսքերը անպատճառ կըհասցնէին տեղ և վերջապէս մի քանիսին էլ նա մատակարարել էր հաճոյք, քէֆ, զուարճութիւն, արշաւանքներ . . . Եւ այդպիսով նա, սկսած ամենահասարակ էազայից մինչև կատիին՝ մատուցել էր ծառայութիւն և շողոքորթութիւն . . . և ահա նա ծանօթացել էր բոլորի հետ, ունէր իր սրտում նրանցից իւրաքանչիւրի մի մի գաղտնիքը, ունէր նրանցից իւրաքանչիւրի թոյլ միջակ կամ ջերմ բարեկամութիւնները . . .

Այդ առաւելութեան հետ, նա ունէր և փարձառութիւն. ժամանակին Թօփալը մի մանրավաճառ էր, բայց աւելի զբաղուած էր մուրհակներով փող տալով, քան վաճառականու-

1 Դատաստանական անդամներ. 2 Դատաւոր 3 Քննիչներ 4 Կաղ:

թեամբ. մի օր էլ փորձեց կեղծ մուրհակ շինել, բայց բռնուեց, դատի տակ ընկաւ, մի տարի բանտ նստեց, տարիներով դատ վարեց, վերջապէս ազատուեց բանտից, բայց երբ դուրս եկաւ, նրան արդէն յայտնի էր թէ ինչ բան է նախնական, վճռաջինջ, եղեռնական և այլ ատեանները. ինչ են օրէնքները և ինչ միջոցներով կարելի է այդ օրէնքների առաձգականութիւնից օգտուել և կամ ժողովրդեան տրգիտութիւնը աչքի առաջև ունենալով՝ հարբուտանալ, բարձրանալ, ճառել ճոռոմաբանել, խարդախել, գրբփել-գջլել և բոլորի տակից դուրս գալով՝ շրթունքները սրբել ու անմեղ մարդու պէս մի կողմը կանգնած, ժրպտել իւր անթիւ, անհամար զոհերի տանջանքների վրայ . . . Այդ բոլորը նա սովորեց գործնականապէս, որովհետև ինքն էլ ենթարկուեցաւ այդ գործողութիւններին, ինքն էլ տեսաւ շրթունքները սրբող գող աղուէսների, ինքն էլ տանջուեց... և եթէ արդարացաւ, դրա պատճառը իւր ըստորաքարշութեան ընածին հակումն էր . . .

Թօփալը Վանի փաստաբանների երրորդ յատկութիւնն էլ ունէր. նա ստանում էր

օրէնքների բրոշիւրներ, ունէր 6 հատոր Դէսատուրը [1], կարդում էր և մինչև որ մի տարիի չափ էլ քաշ չբեկաւ դատարաններում՝ չբձեռնարկեց փաստաբանութեան: Նա ամէն առաւօտեան լուսաբացին զարթնելով, դնում էր իւր առջև օրէնքի գրքերը, անյագաբար կարդում էր (այդպէսով տաճկերէն լաւ կարդալ ու գրել էլ սովորեց), յետոյ շտապում էր եկեղեցի և երբ ժամերգութիւնից յետոյ նա առուակի վրայ լուացուելու էր իջնում, կանգնեցնում էր փողոցից անցնող իւրաքանչիւր գիւղացու և համարեա թէ միշտ, սկսում էր նրանց հետ մի այսպիսի խօսակցութիւն.

—Ո՞րտեղացի ես, ախպէր,

—Սիկայեցի [2] եմ աղա,

—Ես աղա չեմ, ես էլ քեզ նման ախպէր եմ . . . Է, լաւ, ինչու ես եկել քաղաք.

—Դատ ունիմ.

—Դատ ունիս, գոչում էր Թօփալը և նրա աչքերը ուրախութիւնից փայլում էին— ինչ դատ ունիս.

1 Տաճկական օրինաց գրքերը:

2 Մի գիւղ է, վանից կէս ժամ հեռաւորութեամբ:

Այստեղ Թօփալը ստիպում էր գիւղացուն նստել առուակի մօտ, մէջքը կռթնեցնել մի ծառի և պատմել դատի մասին. գիւղացին պատմում էր, Թօփալը ամենայն ուշադրութեամբ լսում էր, երբեմն գլուխը թափահարում, երբեմն աչքերը չռում, երբեմն բացականչութիւններ անում և վերջապէս երբ գիւղացին ասել էր ամէն ինչ, ստանում էր պաշտօնական կերպարանք, դէմքը կնճռելով փոքր ինչ մտածում և ապա դառնալով դատողութեան կամ կարծիքի սպասող սրտատրոփ գիւղացուն, ասում էր.—վա՛խ, վա՛խ, իմ ախպէր, բանդ գէշ է . . . փողերդ պիտի երթայ, դատդ պիտի կորցնես և ով գիտէ, դուցէ բանտ էլ նստես . . . Յետոյ տեսնելով գիւղացու դառնաթափուելը, իսկոյն աւելացնում էր.

—Բայց . . . մի՛ վախենալ, եթէ կուզես ես քեզ խրատ կրտամ թէ ինչ պիտի անես... փող չեմ ուզիլ քեզնից. իսկ դատաստանական ծախսերը դու ինքդ կանես . . . Հիմա դու ո՞ւր էիր գնում.

—Խնդիր գրել տալու . . . Ահմէդ աղայի մօտ.

—Հ՛ը, չերթաս, ախպէր, չերթաս էտ անիրաւի մօտ . . . Հէմ [1] 100 փարադ կառնի, հէմ էլ գրած խնդիրը մէկ փարայի օգուտ չի տալ . . . ա՛յ, գնա Նազիմ էֆէնտիի օդան . . .

Թօփալը գիտէր իւր արածը. քաղաքում կային մի քանի Հայեր և տաճիկներ, որոնք խանութներ էին վարձել և միմիայն խնդիրներ գրելով էին զբաղվում. Թօփալը դրանցից մէկի հետ բարեկամացել էր, պայման էր կապել նրա հետ, որ իւր ուղարկած խնդիր գրել տուողների տուածներից 1/4 ը ինքը կվերցնէր և ամենքին ուղարկում էր նրա մօտ.

—Կասես Թօփալ Ակօն ուղարկեց ինձ, ասում էր նա գիւղացուն—որ այդ ասես, նա քեզ համար մի այնպիսի խնդիր կըգրի, որ կազատուես ամէն փորձանքներից . . .

Մի քանի ժամ Թօփալը գիւղացիներին այդպէս խօսեցնելուց յետոյ, մտնում էր տուն ճաշում և շտապում դատարան, ուր նա գիւղացիներին՝ մտնելիք սենեակներն էր ցոյց տալիս, գնալիք

1 Թուրք.

տեղերը առաջնորդում, գրագրին կամ կադիին էր ներկայացնում բոլորին, իսկ ինքը գնում էր դատարանի սրահը, նստում մօտ և ուշադրութիւնը լարելով լսում էր բոլոր դատերը սկզբից մինչև վերջ. մի բառն էլ չէր փախցնում:

Ընդմիջումների ժամանակ նա շողոքորդ ժպիտով մօտենում էր էազաներին կամ կադիին և երբ կարողանում էր նրանց մի ծիծաղին կամ մտերմական վարմունքին արժանանալ, ետ դառնում ու գիւղացիներին էր նայում տեսնելու համար թէ իրեն դիտող կա՞ր... ի հարկէ կար, գիւղացիները սկսում էին մեծ կարծիք ունենալ նրա վրայ, Թօփալ Ակօի վրայ, որի հետ կատակներ էին անում էազաները, կադին և կամ միւֆտին . . .

Թօփալը դրանից յետոյ վազում էր իւր գիւղացիների մօտ, հարցնում էր թէ ինչ արին, գոռգոռալով նեղանում էր և հայհոյում նոցա, եթէ մի սխալ ընթացք էին բռնել. շատ անգամ իսկ ինքը դիտմամբ նրանց արածի մէջ սխալ էր գտնում, բարկանալու կամ գոռգոռալու բուռն փափագ զգալով (և ինչ էք կարծում, գիւղացիք մի տեսակ մխիթարութիւն էին ըզ-

գում, երբ յանդիմանվում էին իրենց մի որևիցէ սխալ ընթացքի համար):—Էշ էք, արխմար էք, գոչում էր նա-խօսքը լաւ չէք հասկանում, վնասվում էք և յետոյ մեզ մեղ դնում թէ ձեզ խաբեցինք, տո՛, ախմախներ, փաստաբանը ինչ անի, երբ դուք նրա ասածը չէք անում . . .

—Իրաւունք ունիս, Ակօփ աղա, հայհոյիր մեզ, մենք ախմար ենք, էշ ենք . . .

—Ա՛յ, շարունակում էր Թօփալը-ուրիշ բան է, եթէ դուք փաստաբանին ձեզ վէքիլ[1] անէք, ծախսի փողը տաք ու զրաղ քաշելով, սպասէք մինչև վերջը... այն ժամանակ իհարկէ, փաստաբանը իր արածը գիտէ, թէ չէ, դուք ձեր էշութիւնով որ քանդէք մեր շինածը՝ ով է մեղաւոր . . .

—Ղուրբան քեզի, Ակօփ աղա, ապա ինչ անենք, բանմ էր եղաւ, դալտի արինք, դու քո Աստուած, արի մեր այդ արածը ուղղիր, ինչ որ ուզես կըտանք . . .

—Լա՛ւ, լա՛ւ, գոչում էր Թօփալը—ես ձեզ-

---

1 Հաստատորմատար:

նից փող առնող չեմ, առանց էն էլ ձեզ ուտելու հաց չի մնացել . . .

Եւ սովորցնում էր մի քանի այնպիսի գործողութիւններ, որոնցով գիւղացին աւելի և աւելի խրվում էր սխալմունքների մէջ և վերջապէս ստիպվում էր ետ քաշուել, նրան վէքիլ անել և տալ ինչ որ ուզում են . . .

Հետզհետէ Թօփալը սկսեց իր գործը մեծացնել. նրա անունը արդէն տարածուել էր գիւղերի մէջ և Թօփալը այլ ևս հանգստութիւն չունէր: Տանը նա ընդունում էր գիւղացւոց, փողոցում հանդիպելիս լսում էր նրանց, ծառերի տակ կամ մի սրճատան կամ մի տան պատի տակ քաշտալով ընդունում էր նրանց թղթերը, փողերը և սաածները, դատարանի սրահում մղելով նրանց մտցնում այս այն սենեակ ստորագրութիւններ ու կնիքներ էր դնել տալիս և գիւղացիք անպայման հաւատում էին նրան. գիւղացիք տեսնում էին որ իրենք անկարող էին դատաստանական այդ խառնուրդի մէջ մի քայլ իսկ անել և կուրօրէն կառչում էին ամէն յարդից, կարծելով թէ պիտի ազատուին... և եթէ գլորվում էին, տխմարութիւն

իսկ ունենում էին մխիթարելու, մտածելով որ գոնէ օրէնքով էին կործանվել . . .

Բ.

Նրա անունը Թօփալ էր, որովհետև կաղ էր և ոչ միայն մի ոտքով, այլ երկու. դրա համար իսկ երբ ման էր գալիս, նմանում էր մի փքած բադի: Կարճահասակ էր, մինչև իսկ թզուկ, խորշոմապատ պղնձագոյն դէմք, փոքր խոր ընկած շարժուն բբերով աչքեր, հաստ շրթունք, հաստ ընչացք, գերծած ծնօտ, կոշտ կարճ մատներով ձեռքեր: Գլխին կրում էր մի երկար փիւսկիւլով կարմիր ֆէս, վրան մի եռգմա փոթաթած. սճեղնաւոր մանիսայի արխալուղի վրայ հագնում էր հնամաշ կապոյտ ֆէրէջէ-չիւբբէ և ոտքերին կրում էր մի ահագին եամանի, որով նա սատիկ փոշի էր հանում փողոցից անցնելու ժամանակ: Անցնելու ժամանակ անդադար անհանդարտ ակնարկներ էր ձգում իր երկու կողմը, թափանցիկ ակնարկով զննում էր իւրաքանչիւր իր, իւրաքանչիւր մարդ, մի կողմը քաշուելով ակնածութեամբ և

մինչև կէս մէջքը խոնարհելով բարևում էր պաշտօնեաների, ուղղակի քայլում էր դէպի գիւղացիները և բարձրավիզ ընդունում էր նրանց խոնարհ բարևները, միշտ աշխատում էր մի քայլ առաջ քայլելու, երբ մի գիւղացու հետ էր և մի քանի քայլ ետ, երբ մի պաշտօնեայի առջև քծնում էր։ Հետաքրքրվում էր ամէն բանով, ուզում էր ճանաչել ամէնքին, գիտէր ամէն ինչ. նրա գլուխը տեղական մի ամբողջ էնցիկլոպեդիական բառարան էր. նա մինչև իսկ ընտանեկան գաղտնիքների մէջ մրտնում էր, գիտէր թէ այս ինչի կինը որի աղջիկն է, ինչքան օժիտ բերեց իր ամուսնուն. ինչու կռուեցին գրացիների հետ, ինչու սկեսուրի հետ լաւ չի ապրում և այլն և այլն... մայրաքաղաքի լուրերից էլ գիտէր. նա հետաքրքրվում էր լրագիր կարդացողներից և անյագութեամբ լսում էր ամենաաննշան լուրերն անգամ։

Այդպէս էր Վանի փաստաբան Թօփալ Ակօն։

Սրանից մի քանի տարի առաջ Թօփալը գտնվում էր իր գործունէութեան ասկէդարի

մէջ. նա գլուխ քորելու ժամանակ իսկ չունէր և երեկոյներն էլ շատ ուշ էր տուն գալիս, իսկ լուսաբացին հազիւ կերակուր կերել և բազրն էր դուրս գալիս, որ շրջապատվում էր գիւղացիներով, խօսում էր նրանց հետ, հարցնում, տեղեկանում և այդպէս շրջապատուած նա գնում էր մինչև քաղաք, նստում մի սրբճատան մէջ սուրճ խմում, ներգիլէ ծխում ու շտապում էր դատարան։ Այնտեղ նա մտնում էր սենեակից սենեակ. ատեանից ատեան, կանչում էր դատ ունեցող գիւղացիներին, խովորցնում նրանց խօսելու բաները և այդպէս անց կացնում ամբողջ օրը։

Նրա Հանգստութեան օրը միմիայն ուրբաթ օրն էր, երբ դատարաններն փակ էին լինում, ուստի և գիւղացիք չէին լցվում քաղաք։

Ուրբաթ օրերը Թօփալը գնում էր քաղաք, բայց շուտ էր վերադառնում և նստելով փողոցում իր տան դռան առջև ներգիլէ ծխելով անցուդարձ անողներին նայում կամ օրինաց գրքերը թերթում։

Այդպիսի մի ուրբաթ օր էր, որը Թօփալ Ակօն չէր մոռանալու իր կեանքի մէջ։

Քաղաքում մի քանի էազանների և բէյերի հետ տեսնուելուց յետոյ, Թօփալը վերադարձաւ Այգեստան, ճաշեց, մի կուռիկ [1] էլ Շաղբաղիի գինի կոնծեց, ներգիլէն լցրեց, դուրս գնաց փողոցը և ներգիլէի շիշը վազող ջրի մէջ դրած, ինքը պլպլած կանաչ խոտի վրայ սկսեց ծխել ու անցուդարձ անողներին դիտել։

Անցնում էին արհեստաւորներ, Թօփալը բարևեց նրանց, գործի յաջողութիւն մաղթեց և հետաքրքրուեց թէ որի տան վրայ են աշխատելու։ Փիչ յետոյ անցաւ մի ձուկ ծախող, որը ձկներով լիք կողովները բարձած էշի վրայ գոռում էր—„ձուկ առէք, ձ՛ուկ, ձ՛ուկ...“ [2]։ Թօփալը թէև գիտէր արդէն, բայց նորէն հարցրեց ձկան գինը. հետաքրքրուեցաւ թէ ձկան բէնտը շատ ձուկ տալի՞ս է թէ ոչ և կամ թէ տաճը արու է թէ էգ [3]... յետոյ յայտնեց որ ինքը արդէն 1000 հատ գնել է։ Դրանից յետոյ անցաւ մի մարդ, որը բահը ուսին դրած ջրի ուղղութեամբ գնում էր.—ջրաբաշխն էր.

1 Հոգի աման, թաս. 2 Ցածիկները ձ տառը գ են արտասանում։ 3 Իգը իր փորի համար գերադասելի է։

Թօփալը նրան էլ խօսեցրեց. անցաւ ձէթ ծախողը, Թօփալը ձէթի գինը հարցրեց և երբ բարևում էր մի քաղաքացու, աչքը ընկաւ մի գիւղացու վրայ, որը պայուսակը ուսին շտապով անցնում էր դէպի քաղաքի կողմը։

—Ախպէր, գոչեց նրան Թօփալը—դո՞ր կերթաս... վա՛յ, յարեց նա, երբ գիւղացին կանգ էր առել—էդա տի՞ւ ես, Մելքո՛ն, արէ ստեղ խենք [1]... բարով ես եկէ, ի՞նչխ [2] էլաւ որ քեզաք էկաբ... մօտ արի, արէ նստի ճիգարա [3] մը քեաշի... արե՛, արե՛ . . .

Գիւղացին մօտեցաւ, բարևեց և ասաց.

—Չէ, Ակօփաղա—գործունիմ շտապում եմ.

—Այդ ի՞նչ գործ է որ այդքան շտապում ես, հարցրեց հետաքրքրութեամբ Թօփալը—էլի կերթաս, նստիր, նստիր ճիգարա մը քաշիր... հէ՞, էա ի՞նչ գործ է . . .

—Է՛հ, Ակօփ աղա—ասաց գիւղացին դառնութեամբ—էլ մի՛ ասիլ, երեք օր է, որ խելքս վրաս չի, հալրս մեռաւ . . .

—Վա՛յ, վա՛յ, Կիրակոս աղէն մեռաւ. . .

1 Նայենք։ 2 Ինչպէս։ 3 Պապիրոս։

ափսոս, ափսոս...Աստուած հոգին լուսաւորի, շատ լաւ մարդ էր.—Է՛, յետոյ, մեռաւ՝ մեռաւ, էլ ինչ կայ խելք կորցնելու...

—Միայն այդ չէ, շարունակեց գիւղացին —լուր ստացանք որ Կուռուպաշայ հօրեղբայրս էլ Ստամբօլ մեռել է . . .

—Էտ ո՞ր հօրեղբայրդ էր, հարցրեց Թօփալը—էն չէ՞, որ երկու տարի առաջ երրորդ կնիկը առաւ:

—Հա՛, նա է... գնացել էր Ստամբօլ իր դահվէն ծախելու, հիւանդացել է ու յանկարծ մեռել:

—Է՛, խեղճ տղայ, է, յետոյ . . .

—Այժմ ես ու եղբայրներս մէկ մէկու միս ենք ուտում... քեզ յայտնի է, որ Կուռուպաշայ հօրեղբայրս հարուստ էր. ասում են շատ հող, երեք մեծ այգի, 40 կով, ոչխար ու գոմէշ ունի... հայրս էլ հող ու այգիներ է թողել. կռւի մէջ ենք այժմ. Մարգարը գանգատուաւ, Վարիսէյի պաշտօնեաները երէկ եկան ամէն բան գրեցին... հիմա չենք իմանում թէ ում ինչ կըհասնի... հօրեղբօրս կինն էլ մէկ կողմից կանգնել է ու իր բաժինն է ուզում...

—Վա՛յ, վա՛յ, վա՛յ, գոչեց Թօփալը—այդ ինչ խառնվել է գործը... Է, այժմ ո՞ւր էիր գնում քաղաք:

—Գնում էի Ահմէդ էֆէնդիին տեսնելու, խորհուրդ հարցնելու , տեսնենք ինչ կասէր...

—Լաւ, ծիծաղեց Թօփալը—հային թողել, տաճկին էք գնում, ինձ սկի միտդ չէս բերել, ծո՛, ո՞ւր ես գնում էտ անիրաւի մօտ, որ ձեր սաղ ունեցածը կուլ տայ, ու ձեզ էլ բանտերումը փթեցնի . . .

—Բաս ի՞նչ անեմ, Ակո՛փ աղա:

—Ասպէր, թէ կուզես ես քեզ խորհուրդ կըտամ ու փող էլ չեմ առնիլ, յետոյ կըտեսնես որ ես լաւ մարդ եմ, որ Ահմէդ էֆէնտիի մօտ գնալու փոխարէն, ինձ մօտ սկսի գալիր . . . ինչ և իցէ... այսօր ոչինչ, հէօքմէթը բաց չի. այսօր կըմնաս մեր տան, իսկ էգուց ես քեզ համար մէկ արզուհալ [1] կըգրեմ կըտանես կըտաս միւֆթիին և կըտեսնես, որ ամէն ինչ լաւ կերթայ . . .

—Իսկ հօրեղբօրս կինը . . .

1 Խնդիր:

3709-48

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԱՊՍՀ ... Ա. ... ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

—Քաղաքումն է։

—Քաղաքումն է, Ս. Վարդանի մօտ իր եղբօր տանն է իջել, ասում են, որ էգուց միւֆտիին խնդիր է տալու։

—Ձօ, թող տայ, ծիծաղեց Թօփալը—նիզամով քո հօրեղբօրդ կնկան 8-ից մէկ կըհասնի, թող որչափ կուզի տփւի [1], գրանից մի փարայ աւելի չի կարող ստանալ... Հալա տեսնենք թէ երրորդ կնկան բան կըհասնի՞... եղբայրներդ ինչ են ուզում, ինչի՞ էք կռւել միմեանց հետ։

—Մարգարը ուզում է Կուռուպաշի այգիներին տիրանալ ու հողերին, Կարապետը Կուռուպաշի տաւարներին և մեր գեղի այգիին, իսկ ինձ ուզում են թողնել տները և մեր գեղի հողերը . . .

—Լաւ է էլի՞, էլ ինչ ես ուզում։

—Ի՞նչը լաւ է, Կուռուպաշայ այգիները այնչափ մեծ են և պտղաբեր, որ չորս առուս երկու օրւայ մէջ հազիւ են ջրում, տաւարների մէջ էլ 8 հատ գոմէշներ կան, որ հատը 4-5 ոսկի արժեն, իսկ ինձ թողնում են երկու

[1] Խփւել այս այն կողմ։

քարուքանդ տներ և մի բուռ անպտղաբեր դաշտ, ես սկի կըհամաձայնւեմ... կռիւ էլ արինք, Մարգարը Կարապետին էլ լաւ մը ծեծեց, ես էլ երկուսին հայհոյեցի.., մի խօսքով շիլա-ճաշ է դարձել մեր բանը . . .

—Վնաս չունի, ասաց Թօփալը փոքր ինչ մտածելուց յետոյ—շիլա-ճաշ չի եղել, մի վախենալ, ես ամէն ինչ կըշինեմ... բայց պէտք է դու չըխառնւես, որովհետև յանկարծ մի սխալ բան կանես ու գործը կըփչացնես... ինչ և իցէ, այսօր ինձ մօտ մնա կըխօսենք, իսկ էգուց կերթանք քաղաք... հ՛ըմ, յարեց նա գլուխը օրօրելով—գործը շատ է խառնւել, Աստծոյ ողորմութիւնը հասնի... հէյ դիւնեա [1], երեք օր առաջ ինչ գիտէինք, որ էսօր Մելքոնը խելքը կորցնելու խօսքեր է անում . . .

—Հա՛, հա՛, ասաց տխրութեամբ գլուխը—եթէ խելքս չեմ կորցրել, գոնէ շւարել եմ։ չեմ իմանում ուր գնամ, ինչ անեմ... սաղ գլուխցիք թափւեցին, չըկարողացան մեզ հաշտեցնել . . .

[1] Աշխարհ։

—Ի՜նչ հաշտուողներ էք, ծիծաղեց Թօփալը—երեքդ էլ տաք գլուխ, երեքդ էլ ջահիլ,.. է, հարգ ինչպէս է, լաւ է... դեռ տղայ չունեցա՞ր,

—Չէ, չունեցայ, կինս հիւանդ է...

—Աստուած առողջութիւն տայ... այս տարի ցորենը ինչպէս է։

—Լաւ է երևում, եթէ շահնաները փուրփուչուղ [1] չանեն . . .

Թօփալը բարձրացաւ, վերցրեց ներգիլէն և հրաւիրեց Մելքօնին տուն. այնտեղ նրան կերցրեց և որովհետև մթնում էր, հրամայեց կնոջ ճրագը վառել և վերի օդէն Մելքօի համար քնելու տեղ պատրաստել. իսկ երբ Մելքօն գնում էր քնելու, Թօփալը կանգնեցրեց նրան և հարցրեց.

—Գիտե՞ս, գործը շատ փոդ կուգի հա՛ ա՛... փոդ բերե՞լ ես հետդ . . .

—Մէկ ոսկի բերել եմ, եթէ պրծնի՝ ցորեն ու թացան ունիմ կըծախեմ՝ . . .

—Հ՛ըմ, լաւ... մռմռաց Թօփալը մտազբաղ։

1 Ցրուել, ոչնչացնել փչացնել. ծագում՝ է „փորել“ եւ „փչացնել“ բառերից։

Գ.

Վանի շուկան, որը ինչպէս Արևելեան բոլոր շուկաները, ծածկուած է, գտնվում է քաղաքի մէջ—բերդի տակը։ Նա պատկանում է զանազան անձերի և կազմուած է մի քանի մեծ քարվանսարաներից։ Այդտեղ հայերն ևս ունեն իրենց սեփականութիւնը սկսած եկեղեցիներից մինչև մասնաւոր անձերը. սեփականատիրոջ անունով էլ շուկայի մասերը ունին իրենց կոչումը, օր. Նարան-բէյի չարշի, Ահմէդ աղայի եաղլն։

Կալջեանի շուկան աւելի մօտ էր գտնվում դատարաններին և կառավարութեան դռան, որոնք ամէն կողմից շրջապատուած են բազմաթիւ սրճատներով, որովհետև գործ ունոցողները այդպիսի տեղեր են մտնում սպասելու իրենց հերթին։

Կալջեան չարշիից փոքր ինչ ցած, Բոյախանայի գլխի մօտ, մեր պատմութեան ժամանակ գտնվում էր մի փոքրիկ բազով քարվանսարայ։ Բազի մէջ տնկուած էր մի պարտէզ, իսկ պարտէզի մօտ տեղ-տեղ դրուած էին սեղաններ և

աթոռներ. մի քանի գոգնոց կապած մարդիկ առջևի կապած տոպրակի մէջ ունենալով ֆընջաններ, ձախ ձեռքում մաշալով կրակ, աջում՝ սրճով լիքը ամանը, վազն 'ի վազ անցնում էին սեղանների մօտից, այնտեղ նստած անձերին ֆինջանով սուրճ կամ մաշալով կրակ էին մատուցանում և փողերը հաւաքելով մտնում էին մի սենեակ, որը բուն սրճարանն էր։ Պարտէզի մէջ պարբերաբար նստած էին լինում ամէն կարգի մարդիկ, ոմանք ներգիլէ էին ծխում, ոմանք միմիայն խօսակցում, իսկ ուրիշները սուրճ խմում. երբեմն էլ մի տաճիկ թեւերը սոթատած՝ ջրամանը ձեռքին, ոտները բոբիկ կոշիկի մէջ հագցրած՝ գալիս անցնում էր բագի միջով, կըռանում լուացւում էր դէպի պարտէզը թափուող աղբիւրից, ջրամանը լեցնում, իր արդաստը կատարում և տեղնի տեղ աղօթելու չոգում կամ աղօթքներ մրմռալով անցնում մտնում էր սրճատան մի անկիւնում կատարելու իր նամազը։ Այդ սրճարանը Սախօենց Միրօյին էր պատկանում։ Սախօենց Միրօյի սրճարանը նըշանաւոր էր և նրանով, որ յաճախ կադին իսկ իր դրագիրներով ներս էր մտնում պարտէզը և նստում էր սուրճ խմելու։

Յունիս ամսուայ վերջերում, իրիկնապահին, Միրօյի սրճատան պարտէզը գրաւել նստել էին միայն երկու խմբեր։ Պարտէզի մէջ տեղում մի սեղանի շուրջը նստել էր կադին իր երկար ֆէրէջէով. նրա հետ կար քեաթիբ [1] էֆէնդին և միւդէյի իմամիյէն [2]. իսկ պարտէզից հեռու մի պատի տակ լռութեամբ ծըխում և խօսում էին երկու այլ անձեր, որոնցից մէկը Թօփալն էր, իսկ միւսը մի երկարահասակ, խոշոր դէմքով և լայն թիկունքով գիւղացի։

Գիւղացու ոտների մօտ ընկած էր մի փոքրիկ պայուսակ և մի կարճ ցուպ, իսկ Թօփալը իր գաւազանը դրել էր ծնկների վրայ, նէրգիլէի փողը կպցրել շրթունքների ձախ անկիւնին, աջ ձեռքովը մի ինչ որ հաշիւ էր գրում ուղղակի սեղանի վրայ։

—Տես, ասում էր նա գիւղացուն—ես քեզ սկզբից ասացի, որ շատ փող ոչէտք է քո ու-

---

1 Դրագիր կառավարութեան. 2 Ընդհանուր Դատախազ։

զած կերպով դատը դարձնելու համար... դեռ իմ աշխատանքի վարձս չըհաշուեցի, բայց ահա 3-4 քիսելի [1] հաշիւը աչքիդ առջևն է... չէ, Մարգար, քո բանդ չի դատ վարելը, թող գնա բանիդ . . .

—Էլի դու քո էշն ես քշում, գոչեց գիւղացին—դու առաջ ասա ինձ, թէ կարող եմ ասածս անել թէ ոչ, իսկ ինձ վերաբերում է ծախսերին, այդ քո գործդ չէ.

—Լա՛ւ, լա՛ւ, ախպէր, ի՞նչու ես բարկանում... քո ասածիդ պէս դժուար չէ գործը դարձնել... հ՛ըմ, շատ էլ հեշտ չէ, բայց ես կանեմ, Թօփալը կանի, կանի և դրա համար էլ լաւ վարձ կըվերցնի . . .

—Ի՞նչքան, հարցրեց գիւղացին.

—Հ՛ըմ, արեց Թօփալը մտազբաղ—շատ օլիններ պիտի հանել և դժուար թէ ուրիշը ինձ պէս կարողանայ այդ օլինները սարքել . . . գործն էլ ամիսներ կըքաշի . . .

—Դու այն ասա թէ ինչքան կուզես, գոչեց գիւղացին անհամբերութեամբ.

[1] Մէկ քիսէն 5 ռսկի է։

Թօփալը փոքր ինչ լռեց, յետոյ մի անկնարկ ձգեց կոդիի նստած կողմը և կռանալով դէպի գիւղացին, շշնջեց խորհրդաւոր կերպով.

—Ես չհաննամը... ասաց նա—ինձ ինչ որ տաս ձայն չեմ հանիլ. բայց ա՛յ, այն „սիպտակ գլխին“ պիտի մի եղալի պատառ ուտեցնել։

Գիւղացին հասկացաւ թէ Թօփալը որոնց էր ակնարկում.

—Ի՞նչ՞ կայ, ասաց նա—ամենքին մէկ մէկ „դեղին“ կուտեցնենք . . .

—Հայ հօյ... ծիծաղեց Թօփալը—մէկ մէկ դեղինը նրանց ցամաք հացն է խո... էդ չի լինի, եղալի պատառ պիտի ուտեցնել եղալի. հասկանում ես, եղը վրէն կապած . . .

—Էդ խո տունն կըքանդի, դէմքը կնճռեց գիւղացին.

—Ինչէ՞ր ես խօսում, ապահովցրեց Թօփալը —նրանք յիմար են, ասում են փող չենք ուզում... հող են ուզում, իւրաքանչիւրին 5 սոմարանոց հող տաս կառնի ու քեզ էլ մէկ թէմենդէ [1] կանի . . .

—Հի՞նգ սոմարանոց, բաւականչեց գիւ-

[1] Ցածկական բարեւ։

զացին—ես սկի քսան սմարի հող չունիմ, որ էն էլ տամ նրանց, էլ ինձ ինչ կըմնայ.

—Ինձ, ծիծաղեց Թոփալը—արի հաշուենք... կըմնայ երկու մեծ—ահագին այգիներ, 40 տաւար, որոնց 7-8ը գոմէշներ են, 15ը կով և եզ, 3ը ձի, յետոյ... 30 սմարի հող, գիւղում մի տուն, իսկ քաղաքումը մի 200 ոսկի արժող տներ... նրան ռէս Մելիք կասէին, գիտես, փաշայի հարստութիւն ունէր անիծածը . . .

—Հօրեղբայրս, գոչեց յուզմամբ գիւղացին.

—Հա՛, էնց հօրեղբայրդ, ասաց յաղթական կերպով Թոփալը—ես ինքս գնացի ոշարի մէմուրի [1] մօտ և տեսարակները նայեցի..: այս պէս ուրեմն, ես հաշուել եմ, որ բոլոր ծախսերը անելուց յետոյ, քեզ էլի կըմնայ երկու այգի և քաղաքի տները . . .

—Իսկ հողերը, տաւարները . . .

—Վա՛յ, տնաշէն, էդ ինչ է, բաս էլ Թոփալի մամուրին [2] ինչ պիտի տաս, ոշարի մէ-

---

1 Անասնական տուրքերի կառուցարիչ: 2 Հողային տուրքերի կառուցարիչ:

մուրին, ինձ, դատաստանի ծախս... հելէ էն քեսֆտառի ձեռքն էլ մի բան պիտի ձգել, ապա թէ ոչ խայտառակութիւն կըհանէ... դու աղօթք արա որ դրանցով պրծնես... դէհ թէ որ ուզում ես գործը շուտ վերջանայ, ինչքան փող ունես մօտդ տուր և յետոյ վաղն էլ մի քսան ոսկի ճարիր բեր, որ ծախսենք . . .

—Ո՞րտեղից ճարեմ քսան ոսկի, գոչեց գիւղացին.

—Դժուար չէ... գնա ժամկոչենց Աւետիս աղայի կամ փոխսարաենց Մկրտիչ աղայի կամ մուխսի Ասլանի մօտ ու հողերդ գրաւ դիր... ես նրանց կասեմ որ քեզնից շատ տոկոս չառնեն, իրենց էլ վնաս է, որ առնեն, որովհետև էսօր էգուց կըհարստանաս ու նրանց հոգին կարող ես հանել... գնա այժմ, ուշ է, հազիւ գիւղ հասնես . . .

Եւ Թոփալը ներգիլէի փողը բերնից ցած առաւ ու շարժուեց ելնելու.

—Սպասիր. ասաց նրան գիւղացին—իսկ եթէ փողը տալի և խաբեցիր ինձ.

—Վա՛հ... գոչեց իբր թէ զարմացած Թոփալը—էդ ինչքա՞ր ես ասում, մարդ Աստծոյ, խո

ալան-թալան չէ։ Ինձ էլ խօ նոր չես ճանաչում, սաղ աշխարհը գիտէ ինձ, որի՞ մէկ փարան եմ կերել իզուր աեղը, ո՞րի տունն եմ քանդել... չէ, ախպէր, որ այսպէս կասկած ես տանում, երթաս բարև, գնա ինչ որ կուզես արա, ես քեզ հետ էլ խօսք չունեմ . . .

Թօփալը նեղացողի դէմք ստացաւ, ոտքի ելաւ, առաւ գաւազանը, գաղտագողի մի ակնարկ ձգեց գիւղացու վրայ, որը մտազբաղ գլուխը խոնարհեցրել էր կրծքի վրայ և հեռանալուց առաջ, մի խորամանկ հազ արձակեց և ծածկելու համար այդ հազը մռմռաց։

—Էնքան խօսեցի իզուր տեղը, որ թոքերս էլ մաշուեցին . . .

Յետոյ տեսնելով որ գիւղացին արգելք չի լինում իր մեկնելուն, աւելացրեց.

—Դէհ, մնաս բարև, Մարգա՛ր... ես քեզ ախր սկզբից ասեցի թէ ձեզ ալէսների բանը չի այդպէս գործեր անելը... գնա՛, գնա տաւարներիդ մօտ . . .

—Բաս որ իմ բանս չէր, գոչեց գիւղացին գլուխը բարձրացնելով—էլ ի՞նչու եկար ինձ գտար ու յայտնեցիր ինձ որ կարող ես հօրեղ-

բօրս թողած կալուածների միայնակ տէրը շինել... ինչո՞ւ եկար դրգռելու իմ ագահութիւնը, հը՞, որ իմ բանը չէր, ի՞նչ գործ ունէիր ինձ հետ, ինչո՞ւ երկու շաբաթ է քունս կըտրել ես տուել ու չես թողնում իմ գործերս տեսնեմ . . .

—Վա՛յ, վա՛յ, վա՛յ, ասաց Թօփալը ետ ետ քաշուելով և աչքերը չռած—ախպէր, գժուեցի՞ր, դառը խո՞տ [1] ես կերել ի՞նչ է... ես ի՞նչ գիտէի որ քո մէջ հարստանալու շնորհք չըկայ, ես ի՞նչ գիտէի, որ դու կամենում ես առանց փողի փող շահել, ահագին հարստութեան տէր դառնալ, ես ի՞նչ գիտէի որ ինձ էլ խաբեբայ ու ստախօս կըշինես... ձեռք քաշիր ինձնից ախպէր, թոքա՛, զալաթ արի որ քեզ խօսեցրի, շատ զալաթ արի... մեղայ Աստծոյ... էլ բան ուզում ես, ահա մեղայ կանչեցի, ձեռք քաշիր ինձնից, դեռ խօ մի փարադ էլ փառք Աստծոյ չեմ առել, հէլէ քո խմածդ սուրճի ու ներգիլէի, օղիի և մաստիկայի փողերն էլ ծո-

1 Մի տեսակ խոտ է, որի համար ասում են թէ ուտողը կըդժվի։ Ուտողին, եթէ զըժվում է, սառը ջուր են ածում գլխին և քնեցնում, այդպիսով լաւանում է։

ցիցս եմ տալ... էլ ինչ ես ուզում, մամ դառնամ առջևդ վառեմ... չէ, ախպեր, որ էդպես վասվասայով [1] ես, սկի բարև էլ մի տալ ինձ. թող խմածդ սուրճ, օղին և մաստիկան հալալ լինի քեզ . . .

Շարժվեց մի քայլ առաջ, յետոյ յանկարծ ետ դարձաւ, աթոռը մօտ քաշելով գիւղացուն, նստեց, կռացաւ դէպի նա և խռպոտ ձայնով ասաց.

—Ծօ ախմախ, ինչու ես վախենում այդպէս բանից. եթէ վախենում ես որ խաբեմ քեզ, շատ լաւ, ինչքան փող տաս ինձ, ստորագրութիւն առ, որ դատի համար ես տալ, իսկ ինչ վերաբերում է գործը տանելուն, սկի էլ կասկած մի տանիլ. ինձ թօփալ կասեն... թօփալ եմ, բայց ամէնից առաջ վազողն եմ . . . ախմախ մի լինիլ, բէր, բեր մօտիդ փողերը տուր այսօր արզուհալը գրել տամ... դու էլ էգուց էլ փող բեր ու գործը սկսենք... ես իմ բեխերս կրթրաշեմ, կնկայ եազմա կրծածկեմ գլխիս, կերածներս հարամ կանեմ, Տիրամօրայ ընկնաւոր, տիրամօրայ խեղճ կըդառնամ, եթէ երկու ամսից յետոյ դու առօք փառօք Կուռուս-

1 Կասկածոտ:

պաշայ այգիների մէջ բօլթա չքտաս [1]... հը, էլ բան ուզում ես, շուտ արա:

Մարդարը փոքր ինչ էլ վարանեց, ծոծրակը քորեց, յետոյ դանդաղութեամբ ծոցից հանեց քսակը, բաց արեց, պահ մի մատները նրա մէջ կոխելով մտածեց, յետոյ գլուխը թափ տուեց և ասաց.

—Ինչ որ լինելու է թող լինի... ա՛ռ...

—Հա՛, այդպէս, գոչեց թօփալը—քաջ մարդը այդպէս կլիսօսի... յոյսդ Աստծու վրայ դիր և ամէն ինչ լաւ կըլինի... վա՛հ, այս ինչ է, մենակ մի ոսկի՞ ունիս . . .

—Մէկ ոսկի էլ ունիմ, էն էլ պահել եմ տան համար մի քիչ շոր-մոր, կոշիկ-բան առնելու, մէկ լիսուն զուրուշ էլ թուրք Ահմէդին պարաք ունիմ՝ տալու եմ . . .

—Ադամ սէնդէ [2], ասաց թօփալը ձեռքը պարզելով դէպի քսակը-տնեցիք մէկ երկու օր էլ հին շորերով եօլա գնան, իսկ Ահմէտը դարթ կանի, մէկ երկու օր էլ կըսպասի, տուր, տուր այդ մէկ ոսկին էլ... գործը հէնց սկզբից

1 Ճեմել: 2 Մարդ դու էլ, մի բացագանչական ոճ է, որ նշանակում՝ է „բան չունի՞ս„:

շատ փող կուզի... այս մէկ ոսկին արգուհալի տամ, լահիյէի թէ վէքիլութեան թղթի . . .

—Ախը . . .

—Լաւ, տո՛ւր... գոչեց Թօփալը ծիծաղելով և համարեա յափշտակելով առաւ ձեռքից քսակը և հանեց նրա միջի յետին ոսկին . . .

—Դու քո Աստուածը, Ակօփ աղա, ասաց Մարգարը աղիողորմ ձայնով-էնպէս արա որ տունս չքանդես, տղաներիս անօթի չլթողնես ... քեզ ենք ապաւինել . . .

—Վա՛յ ախմախ վա՛յ, ծիծաղեց Թօփալը-անհոգ կաց, անհոգ, Թօփալը ոչ ոքի վնաս չի տուել և չի տայ էլ . . .

—Էլ դու գիտես, ասաց գիւղացին լացի ձայնով-էգուց էլ հողերս գրաւ կըդնեմ ու փող կըբերեմ . . .

—Հա՛, լաւ միտս ընկաւ, ասաց Թօփալը-հազը որ գրաւ ես դնելու... Թափուի միւտիրը ասում էր, որ քեզ փող կըտայ, տոկոս էլ շատ չի առնիլ... բեր նրա մօտ գրաւ դնենք . . .

—Վայ թէ խաբի.

—Ախմախ,, ծիծաղեց Թօփալը-ուրիշը որ խաբի. նա չի կարող խաբել, կառավարութեան

մարդ է... բայց այդ թող մնայ վաղը... վաղը արի մեր տունն կըխօսենք այդ մասին... իսկ այժմ գնա, ես կադիի հետ պիտի խօսիմ . . .

Գիւղացին դանդաղութեամբ բարձրացաւ, մտազբաղ առաւ պայուսակը ու գաւազանը, ծոծրակը քորեց, մի քանի քայլ արաւ, յետոյ դարձաւ Թոփալին, նայեց մի այնպիսի աղաչաւոր դէքով, որ Թօփալից բացի, ամէն ուրիշ անձ կըյուզէր . . .

—Ակօփ աղա... դու քո Աստուածը... մըրմնջեց գիւղացին.

—Գնա՛, գնա՛, ծիծաղեց Թօփալը-միամիտ կաց ու աղօթք արա՛ . . .

Գիւղացին իւր աղաչաւոր ակնարկը դէպի երկինք դարձրեց և մի խոր հառաչ արձակելով մրմնջեց.

—Աստուա՛ծ . . .

Եւ հեռացաւ գլուխը կախած, սիրտը ճընշուած . . .

Թօփալը քմծիծաղ մը դէմքին սպասեց մինչև նրա հեռանալը, յետոյ առաւ իր գաւազանը, մի ակնարկ ձգեց կադիի կողմը և ինչպէս որ գիւղացուն ասել էր, փոխանակ այն կողմը գնա-

լու, քարվանսարայի միւս դռնից դուրս եկաւ շուկան ու մեկնեց դէպի այգեստան մռմռալով ինքն իրեն.

—Լաւ կերակուր է... Աստուած յաջողութիւնտայ, թոռներս էլ ուտեն չի պրծնիլ. . .

Եւ փողոցի մէջ տեղ կանգ առնելով ձեռքերը շփեց . . .

Դ.

Այսպէս Թօփալը ձեռք էր առել Մելքոնին և Մարգարին։ Մելքոնի հետ համարեա թէ վերջացրել էր իր գործը, որովհետև մի օր Մելքոնը սարսափմամբ տեսաւ, որ ոչ միայն գործը աւելի խճճուել, խառնուել էր, ոչ միայն իր հողերի մեծ մասը նա ծախեց դատաստանական ծախսերը վճարելու համար, այլ և Թօփալը ներկայացրեց իրեն զանազան մուրհակներ, որոնց զօրութիւնով Մելքոնը պարտաւոր էր վճարել Թօփալին աւելի քան 30 ոսկիի մի գումար . . .

Միայն այդ չէր Թօփալի սխրագործութիւնը. նա յաջողել էր նաև ձեռք առնել

Մելքոնի հօրեղբօր կնոջը... այդ կինը փող չունէր, բայց հին արծաթեղէններ շատ ունէր. դոքա էլ մտան Թօփալի գրպանը. հերթը Մարգարին էր հասել։ Եւ ահա Թօփալը Մարգարին էլ ձեռք ձգեց և այժմ մտածում էր միւս եղբօր—Կարապետի վրայ . . .

Անցան ամիսներ, Մարգարը իր հողերը գրաւ դրած թափուի մէմուրի մօտ, փողերը յանձնել էր Թօփալին, իսկ ինքը ամեն օր քաշ էր գալիս քաղաքի դատարաններում և կուրութեամբ կնքում ու ստորագրում էր Թօփալի ներկայացրած թղթերը, ասում էր նրա սովորեցրած խօսքերը... որքան գլուխը տրաքացրեց մտածելով, չըկարողացաւ հասկանալ թէ ինչ՞ը են դառնում իր շուրջը և ինքը ի՞նչ դեր է խաղում այդ բոլորի մէջ. երբեմն յուսահատվում էր, անիծում էր այն րոպէն երբ լսեց Թօփալին, կատաղում էր երբ տեսնում էր, որ իր ընտանիքը սկսում է քաղցած և մերկ մնալ, որդիները անխնամ և անկիրթ... բայց Թօփալը յաճախ քաջալերում էր նրան ապագայ հարստութեան յոյսով և ընկղմում էր նրան ինքնախաբէութեան մէջ . . .

Անցան ամիսներ և ահա յանկարծ լուր տարածուեցաւ քաղաքում, որ Կուռուպաշի մելքի գործը մի այսպիսի կերպարանափոխութեան է ենթարկուել։

Եղբայրները իրենց գիւղի ունեցածներից աւելի տէր չեն եղել, իսկ ունեցածներն էլ ծախսուել է դատարաններում։ Կուռուպաշի տաւարներից երեքը ամեն օր Թօփալի դռնից դուրս գալով խառնուում էին փողոցից անցնող նախիրին։ Այդինները (բանից դուրս եկաւ) պատկանում է եղել ոչ թէ մեռնողին, այլ մի տաճիկ բէգի, որը թափու դէլիրէսի միւդիրն էր. դատը դեռ ևս շարունակւում էր, սակայն Թօփալը մեղրը ուտելուց յետոյ, սրբել էր շրթունքները, քաշուել մի կողմ և իրեն դիմողներին մի անգամ ընդ միշտ յայտնել, որ այլ ևս ինքը չի խառնուելու այդ գործին...—ես ինչ որ կարող էի, արեցի, ասել էր նա—այժմ այլ ևս անկարող եմ, որովհետև մէջ տեղում կադին և միւդիրներ կան . . .

Եւ քաշուելով մի կողմ՝ գաղտագողի դիտելով սպասում էր թէ գործը ուր պիտի հասնէր և թէ ինքը այլ ևս կարող էր մի բան

կորզել ընկած դիակից... Մեռնողի կինը պընդում էր որ այդինները իր ամուսնունն էր և ինքը մաս ունի դրանից, Մելքոն և Կարապետը երդվում էին որ գործը Պոլսի ատեաններին պիտի հասցնեն... իսկ Մարգարը . . .

Գործը Իսթինաֆի դատարանն էր հասել, սակայն սկզբից գիտէին, որ Իսթինաֆի դատարանն էլ նախնականի վճիռը պիտի տար, ուստի Մելքոնը և Կարապետը մի վանեցի վաճառականի խորհրդով, պատրաստեցին Կ. Պոլսում մի փաստաբան վարձել, նրան վերջիլ անել և դատը ձգել բարձրագոյն Դուռը . . .

Այդ խորհրդով նրանք քաղաքում իրենց գործերը տեսնելուց յետոյ (երկու ամիս էր, որ գիւղը թողած եկել էին քաղաքում բնակուելու) մարդ ուղարկեցին իրենց գիւղը Ալուր և յայտնեցին Մարգարին, որ դար իրենց հետ միասնար.

Ահա գործերը այսպիսի դրութեան մէջ էին, երբ Ալուր գնացող մարդը քաղաք վերադարձաւ և յայտնեց երկու եղբայրներին, որ Մարգարը չէր ուզում գալ . . .

Այն ժամանակ երկու եղբայրները ձի հեծան և ճանապարհ ընկան դէպի Ալուր գիւղը։

Երբ Հասան գիւղը, գիւղացիք շրջապատեցին նրանց և զանազան հարցեր տեղալ սկսեցին նրանց վրայ. դրանից յետոյ երկուսն էլ ձիերից ցած իջան և Մարգարի տունը գնացին:

Մտան խրճիթը. այդտեղ նրանց աչքին ներկայացաւ մի այնպիսի խեղճութիւն, որ երկուսն էլ ապշեցին: Տանտիկնոջ վրայ ողջ հագուստ չէր մնացել, իսկ ինքը նիհարել և կուզացել. դեռնի վրայ քաշ էին գալիս մի քանի նիհար մանուկներ և այդ բոլորի վրայ աւելացրաւ խրճիթի մերկութիւնը... էլ ոչ հարուստ տան պղնձեղէնն էր մնացել, ոչ անկողնոյ առատութիւն, ոչ բանջարեղէնների, գինւոյ և պաշարի կարասները. միայն մի տոպրակ ալիւր ցոյց էր տալիս, որ դեռ ևս փաքր ինչ ուտելու հաց գտնվում էր այդ տան մէջ . . .

— Տեսնում էք դրութիւնս, ասաց նրանց Մարգարը-Հողս խսթիլալի [1] տակ է, ես մարաքայի [2] ալէս նստել վարում եմ իմ սեփհական հողերս... տաւարները ծախել թօփալ Ակօփին եմ տուել, իսկ տունս գրաւի տակ է... դեռ լսեցէք որ թափու-մէմուրին, որի մօտ գրաւ է հողերս, պայմանաժամը լրանալուն պէս, գրաւելու է բոլորը . . .

— Պայմանաժամը երբ է լրանում, հարցրին վախեցած եղբայրները:

— Մի ամսից յետոյ... իմ մեղքն է, թող հողերս էլ երթայ, ուտելիք էլ չըմնայ ինձ .,. Ստուած ինձ պատժեց իմ ագահութեան համար, ես արժանի եմ . . .

— Իսկ ընտանիքդ, զոչեց Կարապետը-ընտանիքդ ինչով է մեղաւոր, որ քեզ հետ միասին կրէ քո պատիժը,

— Իրաւունք ունիս, Կարապետ, ասաց Մարգարը յուսահատաբար-հէնց իմ գլխաւոր տանջանքը այդ է... տեսնում էք էլ առաջւայ Մարգարը չեմ, բայց թող տանջւեմ մինակ ես, թող հողը իմը չըլինի, բայց ընտանիքս ինչու զրկի, ինչու իզուր տեղը հողը տաճիկը ուտէ, իսկ նրա փոխը թօփալ Ակօն... չէ, եղբայրներ, ես վճիռս տուել եմ... գնացէք շարունակէք դատը, եթէ դեռ ևս ախմախ էք մնացել, եթէ դեռ ևս չըխելօքացաք, տարէք, ձեր յետին կոպէկն էլ ձգէք թօփալ Ակօների ճանկը, իսկ ինձ բաւա-

1 Գրաւ, 2 Մշակ:

կան է, ինչ որ եղաւ... եթէ դատը շահեցիք՝ բոլորը թող ձեզ հալալ լինի . . .

Այստեղ եղայրները պատմեցին Մարգարին դատաստանական վճիռը.

—Ա՛... գոչեց Մարգարը կատաղելով— այդպէս ուրեմն, տաճիկը ուզում է մեր հողերին բոլորովին տիրանալ և Թօփալը Ակօները Նրան միջոց են տալիս, օգնում են... ես, ես կըմեռնեմ և հողս օտարին չեմ տալ... քար կըկրեմ, շան պէս կըչարչարուեմ և հողս օտարին չեմ տալ... գիտեմ, առ այժմ ճար չունիմ, բայց պիտի գտնեմ.., պիտի կատաղեմ, յուսահատուեմ և ահա այն ժամանակ ճարը կըգըտնեմ . . .

—Ուրեմն չէս ուզում մեզ հետ ընկերանալ և դատը Կ. Պոլիս ուղարկել . . .

—Ո՛չ, ո՛չ, գոչեց Մարգարը—քամիի ետեւից էք վազում, կըհոգնէք, քաղցած կըմեռնէք, ահա ասացի, և կանցնեն տարիներ, դուք էլ իմ օրս կընկնէք և այն ժամանակ կըյիշէք թէ ինչ ասաց Մարգարը... ես ձեռք եմ քաշում այդ դատից, թողէք ինձ իմ հողս և ընտանիքս մտածելու . . .

Եղբայրները ելան. Մելքոնը սկսում էր զղջալ, որ ինքն էլ Մարգարի պէս Թօփալի ձեռքն է ընկել, իսկ Կարապետը դէմքը կնճռեց և ասաց Մելքոնին.

—Մելքո՛ն, Մարգարից էլ յոյս չըկայ. խեղճը ցաւից խենթացել է . . .

Երեք օրից յետոյ Կուռուպաշայ Մելիքի դատը գնում էր Կ. Պոլիս... գնում էր անդառնալի , գնում էր գլուխը դնելու Թամիզի դատարանի պատերից կախուած հաստակէկ տապրակների վրայ և քնելու յաւիտեան . . .

Ե.

—Փախէք... ասաց Նրան բարեսիրտ Մըկրտիչ աղան,—փախէք գնա՛, փող աշխատէք, ձեր պարտքդ տուր և հողերդ ազատիր, իսկ քո շացակայութեան ժամանակ քո հողերիդ ձեռք չեն կարող տալ... փախէք . . .

Եւ Մարգարը մի գիշեր փախաւ գիւղից, Կօզլու գիւղում միացաւ Կ. Պոլիս գնացող պանդուխտների հետ ու քսաներրորդ օրը շոգենաւից ոտը կոխեց Կ. Պոլսի ափը . . .

Ծանօթները շատ գտաւ. իրեն պէս շահ-նաններից, վաշխառուներից և թոփալներից փախած հայ գիւղացիներ էին, որոնք օրն ի բուն չարչարվում էին, քրտինք էին թափում, ամէն գրկանք, ամէն նեղութիւն տանում էին, ապրում էին կեղտի մէջ, ուտում էին չոր հաց, և փող դիզում իրենց հողերը ազատելու համար . . .

Երկար տարիներ գոքա ընկած էին այնտեղ, երկար տանջել էին, տաշել-կոփել՝ հրեշներ էին դարձել, իրենց աշխատածից ո՛չ կարողացել էին մի նշանաւոր գումար գոյացնել և ոչ իսկ լաւ ապրել:

Եւ ինչպէ՞ս գոյացնէին գումար, կամ ինչպէս ապրէին լաւ: Աշխատածի կէսը ուտելիքի, հագուստի և տեղեակի էին տալիս. կարծում էք թէ զարմանալ գիտէ՞ն գոքա, ի՞նչպէս զարմանալ, ի՞նչ անել... Նրանց իւրաքանչիւր զարմու�ութիւնը անզգալապէս թիւնաւորել էր իրենց բնաւորութիւնը... դինետների և բոզատների մէջ խմել, պարել և շռայլել էին, իսկ աշխատանքի միւս կէսը Հայրենիքում քաղցած կնոջ և որդիներին էին ուղարկել և մնացել էին միշտ

մերկ... այդպէս էլ կըմնային նրանք, այդպէս էլ կը ոչնչանային, այդպէս էլ կըհրեշանային...

Գնաց Մարգարը և խառնուեց այդ խմբի մէջ, ուստը դէմ տուաւ ճոճող փայտին.—„Եա՛ Վարագայ ս. Նշան“ գոչեց, բեռը բարձրացրեց և թափեց դառն քրտինք . . . Կրեց, կրեց, քրտինք թափեց, արտասուք թափեց, նիհարցաւ, հիւանդացաւ, ամիսներով անխնամ հիւանդանոցում պառկեց, կրեց նախատինք, կրեց բեռ. երկու անգամ էլ քիչ մնաց մեռնէր, տաս անգամ յուսահատութիւնից կամեցաւ իրեն խեղտել, հարիւր անգամ գինետների մէջ արտասուեց, ցաւերը մոռանալու համար խմեց... և վերջապէս վարժուեց այդ կեանքին, սկսեց չարչարուել փող դիզելու... չէ՞ որ թափուի մէմուրը 20 ոսկի և այն էլ տոկոսներով պիտի պահանջէր իրենից, չէ՞ որ ընտանիքը հաց կուզէր... Եթէ չաշխատէր, ո՞վ կազատէր նրա հողը, ո՞վ կը կերակրէր նրա ընտանիքը...

Եղաւ օր, որ նա չուզեց փող տալ հացի և կերակրուել...

—Աստուած իմ... գոչում էր նա—այս ուտելը չը լինի՞...

Եւ կերածն էր մի կտոր չոր հաց։

Մի անգամ իսկ մտքից չանցաւ անիծելու Թոփալին, մի անգամ իսկ չըմտածեց, որ Թոփալն էր իր թշուառութեան պատճառը։

—Իմ մեղքս, իմ ագահութիւնս էր պատճառը, ասում էր նա . . .

Աշխատում է Մարգարը, չարչարվում է մինչև այժմ, իսկ նրա պարտքը տոկոսներ է ծնում և այդ տոկոսներն՝ ուրիշ մանր տոկոսներ... բեռ է կրում, արիւն քրտինք է թափում Մարգարը, կեղտերի մէջ թաթախուած է մինչև վիզը, նիհարցել է ինչպէս կմախք, ծերացել է նա և սակայն աշխատում է, չարչարվում է, անդադար չարչարվում . . .

Չարչարուէր, աշխատէր Մարգար... ճիգ գործէր, աշխուժուէիւնդ մի կորցնել... քեզ Թոփալ Սկօն կողոպտեց, քեզ վաշխառուն բեռնաւորեց.

Չարչարուէր, աշխատէր Մարգար...հողդ մինչև երբ պիտի մնայ օտարի ձեռքում . . .

Վ. Ե Ր Ջ

ՀԱՅ ԱՌԱՔ

10
18933
18934
18935
2013